

1.3. ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Լեռնային Գարաբաղի Հանրապետության սպառողական շուկայում 2012թ. հունիսին 2011թ. դեկտեմբերի նկատմամբ, ինչպես և նախորդ հինգ ամիսներին, արձանագրվել է գնաճ: Սպառողական գների ընդհանուր մակարդակի փոփոխությունը պայմանավորված է պարենային ապրանքների գների փոփոխությամբ՝ կապված պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնայնության, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխության հետ:

Գների և սակագների փոփոխություններն, ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2012թ. հունվար-հունիսին

2012թ.	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Սղաճը		Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս ³⁾	Արտահանման միջին գների (միջին արժեքի) ինդեքս ⁴⁾	Ներմուծման միջին գների (միջին արժեքի) ինդեքս ⁴⁾
		2011թ. դեկտեմբերի նկատմամբ	2010թ. նկատմամբ				
Հունվար	102.0	102.0	116.4	101.1	107.0	95.4	105.1
Փետրվար	99.7	101.7	116.1	100.3	100.8	103.1	101.6
Մարտ	100.5	102.2	116.7	109.0	99.5	108.9	100.5
Ապրիլ	99.6	101.8	116.3	96.1	96.4	89.0	98.2
Մայիս	99.7	101.5	115.9	104.1	98.3	99.5	104.8 [#]
Հունիս	99.2	100.8	115.1	90.9	98.0	101.8	95.8
2012թ. հունվար-հունիսը	101.4	-	-	85.8	104.2	97.0	108.9
2011թ. հունվար-հունիսի նկատմամբ							

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության՝ ԼԳՀ-ում գների դիտարկումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին և 20-ին մոտ ընկած ժամանակահատվածում, հանրապետության 7 բնակավայրերում՝ 411 անվանում ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների գծով:


²⁾ Գների դիտարկումը կատարվում է 40 արդյունաբերական բազային ձեռնարկություններում՝ 41 անվանում արտադրանք-ներկայացուցիչների գծով:

³⁾ Ըստ գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 34 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁴⁾ Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2011-2012թթ. հունվար-հունիսին

(նախորդ տարվա հունվար-հունիսի նկատմամբ, %)



ԱՐՏԱՐԺՈՒԹՎՅՈՒՆ ՇՈՒԿԱ:


ԼԳՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2012թ. հունվար-հունիսին

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Սպառողական գների ինդեքս						
2011թ. դեկտեմբերի նկատմամբ	102.0	101.7	102.2	101.8	101.5	100.8
նախորդ ամսվա նկատմամբ	102.0	99.7	100.5	99.6	99.7	99.2
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	103.5	102.1	101.5	100.3	100.1	101.1

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
<i>ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը</i>						
2011թ. դեկտեմբերի նկատմամբ	101.2	101.4	101.6	102.3	103.9	108.2
նախորդ ամսվա նկատմամբ	101.2	100.3	100.1	100.7	101.5	104.2
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	106.2	106.5	105.6	104.9	106.3	110.6
<i>Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը</i>						
2011թ. դեկտեմբերի նկատմամբ	99.1	101.9	101.8	102.2	100.8	102.9
նախորդ ամսվա նկատմամբ	99.1	102.8	99.9	100.3	98.6	102.1
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	102.4	103.2	99.6	95.4	94.7	96.3

ԼՂՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2011-2012թթ. հունվար-հունիսին, տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը = 100.0)



2012թ. հունիսին 2011թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 0.8 տոկոս աճի պայմաններում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 8.2 տոկոս աճ, այն դեպքում երբ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 3.6 տոկոս գների աճի պայմաններում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 4.0 տոկոս աճ:


ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2011թ. հունիսին կազմել է 374.7 դրամ, իսկ ընթացիկ տարվա հունիսին՝ 414.5 դրամ՝ աճելով 10.6 տոկոսով:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2012թ. հունիսին 2011թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100.8 տոկոս:

Սպառողական գների ինդեքսի հավելաճի տեմպը 2002-2012թթ. հունիսին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական գների ինդեքսը 2011-2012թթ. հունվար-հունիսին

(%)

	Ընդամենը		այդ թվում՝					
	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելիչ խմիչք և ծխախոտ)		Ոչ պարենային ապրանքներ		Բնակչությանը մատուցված ծառայություններ	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2011թ.								
Հունվար	102.4	102.4	104.3	104.3	102.2	102.2	99.6	99.6
Փետրվար	101.1	103.5	101.4	105.8	100.9	103.1	100.6	100.2
Մարտ	101.0	104.6	101.5	107.4	100.5	103.7	100.3	100.5
I եռամսյակ	104.6*	x	107.4*	x	103.7*	x	100.5*	x

	Ընդամենը		այդ թվում՝					
	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)		Ոչ պարենային ապրանքներ		Բնակչությանը մատուցված ծառայություններ	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
Ապրիլ	100.9	105.5	99.9	107.3	100.7	104.4	102.9	103.5
Մայիս	100.0	105.5	99.5	106.8	101.2	105.7	100.2	103.7
Հունիս	98.2	103.6	96.6	103.2	100.4	106.1	100.2	103.8
II եռամսյակ	99.0*	x	96.1*	x	102.3*	x	103.3*	x


2012թ.

Հունվար	102.0	102.0	103.2	103.2	100.5	100.5	100.4	100.4
Փետրվար	99.7	101.7	99.3	102.6	100.1	100.6	100.2	100.6
Մարտ	100.5	102.2	99.5	102.0	100.7	101.3	102.3	102.9
I եռամսյակ	102.2*	x	102.0*	x	101.3*	x	102.9*	x
Ապրիլ	99.6	101.8	99.0	101.0	101.2	102.4	100.1	102.9
Մայիս	99.7	101.5	99.4	100.5	100.1	102.6	100.0	103.0
Հունիս	99.2	100.8	98.5	99.0	100.1	102.7	100.1	103.1
II եռամսյակ	98.6*	x	97.1*	x	101.4*	x	100.2*	x

*) Եռամսյակի վերջին ամիսը նախորդ եռամսյակի վերջին ամսվա նկատմամբ

2012թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.2 տոկոս, այդ թվում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) ապրանքներինը՝ 98.5, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սակագներինը՝ 100.1 տոկոս:

ԼՂՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2012թ. հունվար-հունիսին տոկոսներով (նախորդ ամիսը=100.0)



Սպառողական գների ինդեքսը 2012թ. հունիսին 2011թ. հունիսի համեմատ կազմել է 101.1 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 107.5 տոկոսի դիմաց: Նշված ամսում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 99.4 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 104.4, իսկ վճարովի ծառայությունների սակագներինը՝ 102.6 տոկոս:

Գների միջին ամսական տղանը 2011-2012թթ. հունվար-հունիսին ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

	2011թ. հունվար-հունիս	2012թ. հունվար-հունիս
Սպառողական գների ինդեքս	0.6	0.1
<i>այդ թվում՝</i>		
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	0.5	-0.2
ոչ պարենային ապրանքների	1.0	0.4
ծառայությունների	0.6	0.5
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	0.1	0.2
Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս	0.4	0.0

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2012թ. հունվար-հունիսին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 101.4 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 99.3 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 105.2, ծառայությունների սակագներինը՝ 103.6 տոկոս, իսկ նախորդ տարվա **հունվար-հունիսին 2010թ.** նույն ժամանակահատվածի համեմատ՝ համապատասխանաբար 109.5 տոկոս, 113.7, 106.1 և 103.8 տոկոս:

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ: Պարենային ապրանքների շուկայում (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 2012թ. հունիսին, նախորդ ամսվա համեմատ, գրանցվել է 1.5 տոկոս գների նվազում:

Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների միջին ամսական հավելանք երկրորդ եռամսյակում կազմել է -1.0 տոկոս, այդ թվում ապրիլին՝ -1.0 տոկոս նվազում, մայիսին՝ -0.6 և հունիսին՝ -1.5 տոկոս:

*Առանձին պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները
2012թ. հունվար-հունիսին*

	2012թ.					2012թ. հունիսը 2012թ. մայիսի նկատմամբ	2012թ. հունվար-հունիսը 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ	2012թ. հունիսը 2010թ. նկատմամբ
	հունվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս			
	2011թ. դեկտեմբերի նկատմամբ							
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	103.2	102.0	101.0	100.5	99.0	98.5	99.3	115.9
Պարենային ապրանքներ	103.5	102.1	101.0	100.4	98.8	98.4	99.1	117.0
հացամթերք	99.2	97.4	96.4	96.2	96.5	100.3	96.0	117.6
մսամթերք	101.5	103.6	104.4	104.5	105.9	101.3	109.2	135.0
ձկնամթերք	100.2	100.0	100.1	99.5	99.0	99.5	102.3	111.4
կաթնամթերք	101.1	101.3	99.9	94.5	89.5	94.8	100.6	108.1
ձու	97.3	83.4	77.9	73.8	72.9	98.9	90.2	92.1
կենդանական և բուսական յուղ	102.8	100.3	98.9	97.2	98.3	101.1	105.6	125.7
միրգ	106.7	107.4	108.5	108.1	123.1	113.8	71.6	112.7
բանջարեղեն և կարտոֆիլ	124.1	115.9	109.1	111.2	88.9	79.9	88.2	90.0
շաքարավազ	99.7	97.6	96.7	94.7	95.9	101.2	123.0	141.5
սուրճ, թեյ, կակաո	100.5	100.7	101.1	101.1	100.2	99.1	117.7	129.0
հրուշակեղեն	100.8	101.9	102.0	101.9	101.2	99.3	107.5	113.4
ոչ ոգելից խմիչք	100.0	99.8	99.9	99.9	102.8	102.9	100.7	103.7
ոգելից խմիչք և ծխախոտ	100.4	101.1	101.1	101.2	101.3	100.1	101.9	105.4

Պարենային մի խումբ ապրանքատեսակների միջին հանրապետական գները 2011-2012թթ. երկրորդ եռամսյակում

	չափի միավորը	2011թ.			2012թ.		
		ապրիլ	մայիս	հունիս	ապրիլ	մայիս	հունիս
Միս տավարի	կգ	2288.0	2303.6	2308.3	2498.7	2504.9	2545.5
Միս խոզի	կգ	2613.4	2613.4	2613.4	3665.7	3662.4	3662.4
Թարմ կաթ	լ	253.9	253.4	244.6	259.9	259.6	259.9
Պանիր	կգ	1666.5	1480.1	1212.1	1574.3	1398.0	1232.0
Բուսական յուղ	լ	886.7	892.7	897.5	847.2	822.2	827.7
Չու	տասնյակ	644.2	614.0	597.6	563.9	534.3	527.8
Հաց	կգ	386.4	386.4	386.4	376.5	376.5	376.5
Մակարոն	կգ	434.9	434.2	434.0	406.3	405.9	410.2

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	չափի միավորը	2011թ.			2012թ.		
		ապրիլ	մայիս	հունիս	ապրիլ	մայիս	հունիս
Վերմիշել	կգ	434.3	432.5	432.6	406.4	406.4	405.9
Շաքարավազ	կգ	411.4	418.4	422.3	492.6	482.5	488.3
Բրինձ	կգ	600.0	594.4	588.6	585.1	583.5	577.9
Կարտոֆիլ	կգ	354.0	412.9	374.7	284.7	357.3	294.2
Թարմ կաղամբ	կգ	327.4	389.2	209.4	151.3	205.0	160.8
Գլուխ սոխ	կգ	482.5	376.0	330.8	302.5	314.3	346.5
Գազար	կգ	495.5	539.5	584.3	303.2	306.7	558.5
Խնձոր	կգ	1053.1	1007.0	861.0	491.3	489.9	664.3
Թեյ	տուփ	493.6	494.8	494.8	497.3	497.3	497.7

ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ: 2012թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.1 տոկոսով: 2012թ. հունիսին մայիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի 2.0 տոկոս, դիզելային վառելիքի 0.9 տոկոս գնանկում:

2012թ. հունիսին դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 2.7 տոկոս գնաճ: Գնաճի ամենաբարձր մակարդակ գրանցվել է ոսկերչական ապրանքներ ապրանքախմբում՝ 8.1 տոկոս, իսկ անձնական օգտագործման մեքենաներ և բենզին ապրանքախմբում արձանագրվել է 7.2 տոկոս գնաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 15.1 տոկոս գնաճի փոխարեն:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունը

	2012թ.					/տոկոսներով/		
	հունվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	2012թ. հունիսը 2012թ. մայիսի նկատմամբ	2012թ. հունվար-հունիսը 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ	2012թ. հունիսը 2010թ. նկատմամբ
	2011թ. դեկտեմբերի նկատմամբ							
Ոչ պարենային ապրանքներ <i>այդ թվում՝</i>	100.5	101.3	102.4	102.6	102.7	100.1	105.2	114.1
հագուստեղեն, գործվածք	101.0	101.5	101.4	101.5	102.1	100.6	103.4	110.8
կոշիկեղեն	100.5	101.2	102.2	102.2	102.6	100.4	103.7	111.1
վառելիք	99.8	99.4	99.8	98.3	98.3	100.0	100.1	102.7
կահույք	99.9	99.9	100.1	100.1	100.1	100.0	101.6	107.6
գորգեղեն	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	101.7	112.2
տեքստիլեղեն	100.0	100.9	100.9	103.2	103.0	99.8	107.7	116.8
կենցաղային էլեկտրաապրանքներ	100.3	100.5	100.7	100.8	100.9	100.1	103.5	111.7
խոհանոցային սպասք	100.0	100.6	100.9	101.3	101.4	100.1	103.9	119.1
լվացամիջոցներ	100.5	100.9	100.8	100.7	101.1	100.4	102.0	111.0
շինանյութեր	100.0	100.0	100.1	100.2	100.2	100.0	101.8	107.5
դեղամիջոցներ	100.0	99.9	103.2	103.2	103.1	99.9	108.9	118.5
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	100.1	103.8	108.1	108.7	107.2	98.6	110.3	127.3
մշակույթի ապրանքներ	102.2	98.8	96.7	96.3	94.9	98.6	103.1	107.0
գրենական պիտույքներ	100.8	101.0	101.2	101.2	101.2	99.9	104.0	113.9
գեղահարդարման ապրանքներ	100.9	100.8	100.7	101.1	102.5	101.4	102.1	106.4
ոսկերչական ապրանքներ	100.3	104.0	104.0	104.1	108.1	103.8	134.7	162.1
անձնապիտո ապրանքներ	101.2	100.5	100.5	100.5	101.0	100.5	103.8	107.7

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Հաշվետու տարվա հունիսին 2011թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 3.1 տոկոս աճ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի սակագների 3.8 տոկոս աճի փոխարեն:

2012թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագները կազմել է 100.1 տոկոս, որը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի ծառայությունների սակագների 0.8 տոկոս աճով:

2012թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը կազմել է 103.6 տոկոս:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

/տոկոսներով/

	2012 թվականի					2012թ. հունիսը 2012թ. մայիսի նկատմամբ	2012թ. հունվար-հունիսը 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ	2012թ. հունիսը 2010թ. նկատմամբ
	հունվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս			
	2011թ. դեկտեմբերի նկատմամբ							
Ծառայություններ, ընդամենը այդ թվում՝	100.4	102.9	102.9	103.0	103.1	100.1	103.6	114.1
կենցաղային	100.7	100.8	100.8	100.8	100.8	100.0	101.1	101.3
բնակարանային-կոմունալ	100.3	100.9	101.0	101.0	101.0	100.0	101.0	119.8
բուժապասարկման	101.2	117.1	117.1	117.1	117.1	100.0	122.4	152.2
տրանսպորտի	98.8	98.6	98.6	98.1	98.9	100.8	111.3	108.7
կապի	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	85.2	74.6
մշակույթի	100.0	100.5	100.5	100.6	100.6	100.0	94.3	95.0
կրթության	100.2	100.2	100.2	100.2	100.2	100.0	105.2	119.6
հանգստի	104.6	104.6	107.0	107.0	107.0	100.0	104.2	101.9
հանրային սննդի	101.1	101.1	101.2	102.6	102.6	100.0	109.8	118.0
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	102.4	116.5

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2012թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսի 0.8 տոկոս նվազումը պայմանավորված է դիտարկվող 7 բնակավայրերից 6-ում արձանագրված 0.5-2.2 տոկոս գնանկումով, իսկ մեկում գրանցվել է 0.3 տոկոս գնաճ: Գների նվազման ամենաբարձր տոկոս գրանցվել է Ասկերանում՝ 2.2 տոկոս:

Պարենային ապրանքների շուկայում (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) հունիս ամսին նախորդ ամսվա համեմատ բոլոր քաղաքներում արձանագրվել է 1.0-4.1 տոկոս գնանկում, բացառությամբ Մարտակերտ քաղաքի, որտեղ գրանցվել է 0.6 տոկոս գնաճ:

Ոչ պարենային ապրանքների շուկայում 2012թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ դիտարկվող բնակավայրերից երեքում արձանագրվել է 0.1-0.3 տոկոս գնաճ, երեքում՝ 0.2-0.5 տոկոս գնանկում, իսկ մեկում գների մակարդակը մնացել է անփոփոխ:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2012թ. հունիսին մայիսի համեմատ Ստեփանակերտում սակագները աճել են 0.2 տոկոսով, իսկ մնացած բնակավայրերում վճարովի ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

Սպառման ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2012թ. հունիսին 2011թ. դեկտեմբերի համեմատ ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

/տոկոսներով/

	Սպառողական գների ինդեքս	այդ թվում՝				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառման ապրանքների	դրանցից՝		ոչ պարենային ապրանքների	
			պարենային ապրանքների /ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ/	որից՝		
Ընդամենը ԼՂՀ-ում այդ թվում՝	100.8	99.8	99.0	98.8	102.7	103.1
Ստեփանակերտ	100.9	99.9	99.2	99.0	102.6	103.3
Ասկերան	100.8	99.7	98.6	98.4	103.5	103.4

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Սպառողական գների ինդեքս	այդ թվում՝					բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառման ապրանքների	դրանցից՝			ոչ սպառնային ապրանքների	
			պարենային ապրանքների /ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ/	որից՝	պարենային ապրանքների		
Հաղործ	101.6	99.9	99.2	99.0	102.4	105.4	
Մարտակերտ	101.0	100.9	100.8	100.3	101.0	101.4	
Մարտունի	99.5	98.1	96.3	95.9	104.8	103.0	
Շուշի	101.1	100.2	99.8	99.7	101.5	103.5	
Բերձոր	100.4	100.6	100.3	100.3	101.6	100.1	


Կարևորագույն սպառնային ապրանքների միջին գները 2011-2012թթ. հունիսի 30-ի դրությամբ, ըստ հանրապետության հետազոտված քաղաքների

	միա տավարի	պանիր	կարագ	բուսական յուղ, լիար	ձու, տասնյակ	շաքարավազ	կարտոֆիլ	/դրամ՝ կգ-ի համար/		
								գլուխ տիս	կահամբ	խնձոր
2011թ.										
ԼՂՀ, ընդամենը այդ թվում՝	2 313.0	1217.6	3483.9	898.3	591.6	422.0	288.1	312.5	122.6	878.0
Ստեփանակերտ	2300.0	1000.0	3450.0	882.9	613.0	412.9	275.0	300.0	100.0	850.0
Ասկերան	2300.0	1700.0	3550.0	936.0	600.0	438.0	288.0	350.0	150.0	550.0
Հաղործ	2300.0	1300.0	3500.0	950.0	600.0	450.0	350.0	350.0	200.0	600.0
Մարտակերտ	2300.0	1700.0	3625.0	900.0	500.0	430.0	325.0	325.0	135.0	950.0
Մարտունի	2500.0	1300.0	3500.0	880.0	550.0	420.0	280.0	320.0	100.0	1200.0
Շուշի	2300.0	1300.0	3350.0	900.0	600.0	430.0	300.0	300.0	250.0	1000.0
Բերձոր	2000.0	1600.0	3500.0	1000.0	600.0	450.0	300.0	300.0	200.0	1200.0
2012թ.										
ԼՂՀ, ընդամենը այդ թվում՝	2 552.0	1 257.2	3 802.8	832.8	536.8	489.5	241.4	335.2	144.3	467.4
Ստեփանակերտ	2600.0	1100.0	3807.1	834.5	550.0	487.1	250.0	325.0	150.0	500.0
Ասկերան	2500.0	1500.0	3916.6	866.6	600.0	490.0	266.6	350.0	150.0	450.0
Հաղործ	2500.0	1500.0	4000.0	850.0	500.0	500.0	250.0	400.0	150.0	500.0
Մարտակերտ	2500.0	1750.0	3667.7	810.0	500.0	480.0	225.0	333.3	100.0	375.0
Մարտունի	2500.0	1200.0	3750.0	800.0	500.0	480.0	200.0	330.0	150.0	400.0
Շուշի	2500.0	1300.0	4000.0	850.0	500.0	500.0	200.0	350.0	120.0	500.0
Բերձոր	2400.0	1500.0	3500.0	850.0	500.0	550.0	250.0	350.0	150.0	400.0

Վերը նշված սպառնային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1 կգ-ի, ձվի՝ տասնյակի հաշվարկով) 2012թ. հունիսի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 10659.4 դրամ, ինչը 1.3 տոկոսով քարձր է նույնամուն ապրանքատեսակների նախորդ տարվա հունիսի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (10527.6 դրամ): Դիտարկված քաղաքներում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Մարտունիում (10310.0 դրամ):

ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ: 2012թ. հունիսին մայիսի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 90.9 տոկոս:

ԼՂՀ սպառողական զների ինդեքսի և արդյունաբերողների արտադրանքի զների ինդեքսի փոփոխությունները 2011-2012թթ. հունվար-հունիսին՝ ըստ ամիսների տոկոսներով (նախորդ ամիսը = 100.0)



2012թ. հունվար-հունիսին նախորդ տարվա հունվար-հունիսի համեմատ գրանցվել է արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի զների 14.2 տոկոս գնանկում, ինչը հիմնականում պայմանավորված է հանքագործական և թեթև արդյունաբերության թողարկած արտադրանքի զների համապատասխանաբար 29.4 և 30.6 տոկոս գնանկումով:

ԼՂՀ արդյունաբերողների արտադրանքի զների ինդեքսը ըստ արդյունաբերության ճյուղերի

	2012թ. հունիսը 2012թ. մայիսի նկատմամբ	2012թ. հունվար-հունիսը 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ	2012թ. հունիսը 2011թ. դեկտեմբերի նկատմամբ
Անբողջ արդյունաբերությունը այդ թվում՝	90.9	85.8	100.5
Էլեկտրաէներգիայի, ջրի արտադրություն և բաշխում	100.2	99.8	98.2
Հանքագործական արդյունաբերություն	80.4	70.6	103.1
Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն	100.0	100.0	100.0
Հրատարակչական գործերի արտադրություն	106.0	102.6	111.0
Անտառային, փայտամշակման և թղթի- ցելյուլոզի արդյունաբերություն	89.4	133.5	137.9
Շինանյութերի արդյունաբերություն	99.2	100.2	98.8
Թեթև արդյունաբերություն	118.7	69.4	68.4
Սննդի արդյունաբերություն	95.6	98.9	102.9

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԻՐԱՅՄԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ: 2012թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման զների ինդեքսը կազմել է 98.0 տոկոս:

2012թ. հունիսին 2011թ. հունիսի համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման զների ինդեքսը կազմել է 105.4 տոկոս:

2012թ. հունվար-հունիսին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման զների ինդեքսը կազմել է 104.2 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 110.5 տոկոսի դիմաց:

Գյուղատնտեսական մթերքների իրացման զների ինդեքսը
ԼՂՀ-ում ըստ շրջանների

	2012թ. հունիսը 2012թ. մայիսի նկատմամբ	2012թ. հունվար-հունիսը 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ	2012թ. հունիսը 2011թ. դեկտեմբերի նկատմամբ
Ընդամենը ԼՂՀ-ում	98.0	104.2	103.6
այդ թվում՝			
Ստեփանակերտ	103.0	95.2	84.6
Ասկերան	90.6	101.5	99.9
Հաղրուք	100.2	105.5	107.1
Մարտակերտ	100.5	104.3	105.0
Մարտունի	99.9	105.1	104.6
Շահումյան	98.6	101.9	105.9
Շուշի	99.6	103.1	105.2
Քաչաքաղ	97.5	107.6	105.4

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2012թ. հունիս ամսվա գյուղատնտեսական մթերքների իրացման միջին գները ըստ շրջանների

/դրամ/

Մթերքների անվանումը	Չափման միավորը	Ստեփանավանքեր	Ասկերան	Հաղարուք	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
հացահատիկ	կգ	-	132.0	135.0	128.0	130.0	-	-	145.0
կարտոֆիլ	“_”	-	218.0	198.8	-	220.0	208.0	198.0	200.0
բանջարեղեն	“_”	525.0	490.0	450.0	475.0	498.8	500.0	450.0	480.0
խոտ	“_”	-	50.0	50.0	48.0	55.0	50.0	-	50.0
թուփ միս (կենդանի քաշով)	“_”	-	-	125.0	148.0	140.0	148.0	-	135.0
կաթ	լ	1400.0	1385.0	1380.0	1365.0	1400.0	1358.0	1348.0	1305.5
ձու	տասնյակ	192.2	188.0	190.0	192.2	185.0	190.0	190.0	180.0
բուրդ	կգ	520.0	500.0	480.0	470.0	488.0	480.0	500.0	488.0
	կգ	1100.0	1000.0	1000.0	980.0	1050.0	1000.0	960.0	950.0

Գյուղմթերքների իրացման գների ինդեքսը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2012 թվականի հունվար-հունիսին ըստ ամիսների (դեկտեմբեր 2011=100.0)

